

Մաս 1

Սոցիալական քաղաքականությունը և սոցիալական աշխատանքը. զարգացող փոխառնչություններ

1.1. Բնակչության սոցիալական պաշտպանության համակարգը հետխորհրդային Հայաստանում. ձևավորման ընթացքը և զարգացման հեռանկարները

Մարինե Յարմալոյան, ԵՊՀ Սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնի դասախոս

Քաղաքակիրթ հասարակության ողջ պատմության ընթացքում արդիական է համարվում սոցիալական հավասարակշռության հիմնախնդիրը, որի լուծման գործում շատ է կարևորվում բնակչության սոցիալական պաշտպանության դերը: Կարևոր է հաշվի առնել այն հանգամանքն, որ սոցիալական պաշտպանությունը բնորոշ է զարգացման էվոլյուցիոն բնույթը: Սոցիալական պաշտպանության պարզագույն ձևերը գոյություն են ունեցել հասարակության զարգացման ամենավաղ փուլերում: Քաղաքակրթությունների զարգացման հետ մեկտեղ՝ սոցիալական պաշտպանության ապահովման գործում առավելապես ակտիվանում և կարևորվում է պետության դերը: Այսօր սոցիալական պաշտպանությունը համարվում է յուրաքանչյուր նորմալ գործառնող պետական համակարգի անքակտելի մասը:

ՀՀ սահմանադրությամբ ամրագրված է, որ Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետություն է¹: Սոցիալական պետությունն, ըստ էության, ենթադրում է արդյունավետ գործառնող սոցիալական պաշտպանության համակարգի առկայություն: Այս տեսանկյունից շատ կարևոր է հասկանալ, թե սոցիալական պաշտպանության ինչ համակարգ, ինչպես նաև ինչ մոդել է ձևավորվել հետխորհրդային Հայաստանում, ինչ փուլեր կարելի է առանձնացնել վերջինիս ձևավորման գործընթացում, որոնք են այդ համակարգի հիմնական բաղադրիչները, որքանով է այն արդյունավետ գործառնում, որոնք են այդ համակարգի զարգացման հեռանկարները:

¹ Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, գլուխ 1, հոդված 1: <http://www.president.am/hy/chapter1/>, (21.11.2013թ., ժամը 22:40)

Վերոհիշյալ հարցադրումներին պատասխանելու համար, նախ և առաջ, շատ կարևոր է սահմանել “սոցիալական պաշտպանություն” հասկացությունը: Սոցիալական պաշտպանությունը հանդիսանում է մի շարք գիտական ուղղությունների ուսումնասիրման առարկա: Այսպես, օրինակ, բնակչության սոցիալական պաշտպանությունն ուսումնասիրող հիմնական տնտեսագիտական դպրոցների տեսական-մեթոդաբանական մոտեցումների վերլուծության արդյունքում կարող ենք գալ այն եզրահանգման, որ սոցիալական պաշտպանությունը տարբեր կերպ է մեկնաբանվում այդ մոտեցումների շրջանակներում: *Դասական մոտեցման* շրջանակներում սոցիալական պաշտպանությունը մեկնաբանվում է որպես աղքատության մեջ գտնվող անհատներին աջակցության տրամադրում²: *Նեոդասական մոտեցման* համատեքստում սոցիալական պաշտպանությունը դիտվում է որպես հարստության և աղքատության միջև առկա հակասության հաղթահարում, որի էությունը կայանում է ազգային եկամտի վերաբաշխման մեջ՝ հարուստներից դեպի աղքատները³⁴⁵⁶: *Քեյնսյան մոտեցման* շրջանակներում սոցիալական պաշտպանությունը մեկնաբանվում է որպես եկամուտների սոցիալական մանր՝ մարդու ողջ կյանքի ընթացքում նրա եկամուտների հավասարեցման (համահարթեցման) ճանապարհով⁷: *Ինստիտուցիոնալ մոտեցումը* սոցիալական պաշտպանությունը դիտում է որպես հասարակական արտադրության և սոցիալական արդարության միջև առկա հակասության հաղթահարում⁸:

Բնակչության սոցիալական պաշտպանության, մասնավորապես բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի կազմակերպման, ֆինանսավորման, կառավարման հիմնախնդիրների ուսումնասիրմամբ զբաղվել են մի շարք ռուս գիտնականներ: Այսպես, օրինակ, Վ. Պ. Յուդինի կարծիքով “սոցիալական պաշտպանություն” հասկացությունը չունի հստակ առանձնացված սահմաններ և բովանդակություն: Այս ամենի պատճառով գիտական գրականության շրջանակներում հանդիպում են սոցիալական պաշտպանության բազմաթիվ սահմանումներ⁹: Մեկ այլ ռուս գիտնական՝ Ավերինը, գտնում է, որ սոցիալական պաշտպանությունը “միջոցառումների համակարգ է՝ ուղղված սոցիալական իրավունքների և սոցիալական երաշխիքների պահպանմանը, մարդկանց նորմալ կենսագործունեության համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը, վերջիններիս կյանքի որակը իջեցնող գործանների բացասական ազդեցության նվազեցմանը”¹⁰:

“Սոցիալական պաշտպանություն” հասկացության սահմանումն առկա է նաև Կայուն զարգացման ծրագրում: Համաձայն այդ սահմանման՝ սոցիալական պաշտպանությունը

² Տե՛ս Смит А. Исследование о природе и причинах богатства народов. / А. Смит. – М.: Соц-Экгиз, 1962, էջ 227:

³ Տե՛ս Жид Ш. История экономических учений. / Ш. Жид, Ш. Рист. – М.: Экономика, 1995., էջ 148:

⁴ Տե՛ս Маршал А. Принципы экономической науки / А. Маршал. – в 3-х Т. – М., 1993, Т.3., էջ 132-142:

⁵ Տե՛ս Пигу А. Экономическая теория благосостояния / А. Пигу. – М.: Прогресс, 1985, էջ 138:

⁶ Տե՛ս Нещеретний П.И. Исторические корни и традиции развития благотворительности в России. – М.: Наука, 1993, էջ 123:

⁷ Տե՛ս Мамедов О.Ю. Современная экономика. Лекционный курс. Ростов-на-Дону: Издательство «Феникс», 2001, էջ 521:

⁸ Տե՛ս Мамедов О.Ю. Современная экономика. Лекционный курс. Ростов-на-Дону: Издательство «Феникс», 2001, էջ 522:

⁹ Տե՛ս Юдин В.П. Социальная защита: понятие, сущность, границы. Учеб.-метод. Пособие. – Казань: Казан.гос. технол. ун-т, 1995, էջ 4:

¹⁰ Տե՛ս Аверин А.Н. Государственная система социальной защиты населения: Учебное пособие. – М.: Изд-во РАГС, 2007, էջ 3:

մեկնաբանվում է որպես “պետական ու ոչ պետական մարմինների այն գործողությունների ամբողջությունն, որն ուղղված է տնային տնտեսությունների և անհատների՝ որոշակի ռիսկերին դիմագրավելու կամ կարիքները հոգալու հնարավորությունների ընդլայնմանը”¹¹: Այս սահմանման համաձայն՝ սոցիալական պաշտպանության ապահովման գործում պետությունից զատ կարևորվում է նաև այլ սուբյեկտների դերը, ինչպես, օրինակ, հասարակական հատվածը, մասնավոր հատվածը և այլն:

Այսպիսով, բնակչության սոցիալական պաշտպանությունը գիտական տարբեր ուղղությունների կենտրոնական հասկացություններից է: Այն մեկնաբանվում է երկու իմաստով՝ լայն և նեղ: Լայն իմաստով սոցիալական պաշտպանության ներքո հասկանում են այն գործունեությունն, որն ուղղված է յուրաքանչյուր անհատի՝ որպես լիարժեք անձի, ձևավորման և զարգացման գործընթացների ապահովմանն, ինչպես նաև անձի վրա բացասական ազդեցություն ունեցող գործոնների բացահայտմանն ու հաղթահարմանը, անձի ինքնորոշման և ինքնաիրացման համար անհրաժեշտ պայմանների ապահովմանը: Նեղ իմաստով սոցիալական պաշտպանությունը մեկնաբանվում է որպես օգնության տրամադրում կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված մարդկանց: Այս դեպքում սոցիալական պաշտպանության հիմնական գործիքների դերում հանդես են գալիս սոցիալական ապահովագրությունն ու սոցիալական օգնությունը, մինչդեռ սոցիալական պաշտպանությունը լայն իմաստով մեկնաբանելիս՝ այն իր մեջ ներառում է կենսաապահովման համակարգի այլ ոլորտները ևս:

Մեր կարծիքով, սոցիալական պաշտպանության մեկնաբանումը լայն իմաստով տեսականորեն հիմնավորված է, քանի որ այս դեպքում մի կողմից հնարավոր է բացահայտել սոցիալական պաշտպանության կապը այլ համակարգերի (տնտեսական, քաղաքական, իրավական և այլն) և սոցիալական ինստիտուտների հետ, իսկ մյուս կողմից հնարավոր է ուսումնասիրել սոցիալական պաշտպանության՝ որպես սոցիալական համակարգի, բաղադրիչներն ու դրանց միջև գոյություն ունեցող կապը, սոցիալական պաշտպանության համակարգի ձևավորման և գործառման հիմնական սկզբունքները:

Այսպիսով, սոցիալական պաշտպանությունը սկզբունքների, մեթոդների, պետության կողմից օրենքով սահմանված սոցիալական երաշխիքների, կյանքի օպտիմալ պայմանների ստեղծումն ապահովող միջոցառումների, պահանջումների բավարարման, կենսաապահովման աջակցության միջոցառումների, գործողությունների համալիր է, պետական և հասարակական միջոցների միասնական կիրառում՝ ուղղված քաղաքացու կյանքում այնպիսի ռիսկային իրավիճակների կանխարգելմանն ու հաղթահարմանը, ինչպիսիք են հիվանդությունը, գործազրկությունը, ծերությունը, հաշմանդամությունը, կերակրողի մահը և այլն: Այն նաև ներառում է բնակչության սոցիալապես խոցելի շերտերին՝ սոցիալական փոխակերպումների հետևանքով նրանց կենսամակարդակի իջեցման դեպքում պետության կողմից երաշխավորված նվազագույն մակարդակի նյութական աջակցության ապահովումը: “Սոցիալական պաշտպանություն” հասկացությունը սահմանելիս՝ օգտագործվում են այնպիսի տերմիններ, ինչպիսիք են՝ “գործունեություն”, “գործողություն”, “գործառույթ”, “միջոց”, “համակարգ”, “ինստիտուտ”, “մոդել” և այլն: Այս հասկացության վերլուծության ժամանակ առանձնացվում են սոցիալական պաշտպանության օբյեկտներն ու սուբյեկտները, հստակեցվում են սոցիալական

¹¹ Տե՛ս Կայուն զարգացման ծրագիր, Երևան, 2008թ.: ՀՀ կառավարության 2008թ. հոկտեմբերի 30-ի N 1203-Ն որոշում:

պաշտպանության ընկալման իմաստային առանձնահատկությունները լայն և նեղ իմաստներով, նպատակները, գործառույթները, իրականացման մեխանիզմները: Վերոնշյալ ասպեկտները տարբեր հեղինակների կողմից քննարկվում են ոչ միայն ընդհանուր պլանով, այլ նաև քաղաքացիների կոնկրետ կատեգորիաների նկատմամբ:

Անդրադառնալով “սոցիալական պաշտպանություն” հասկացության սահմանմանը՝ պետք է նշել, որ մի շարք դեպքերում Հայաստանում սոցիալական պաշտպանության համակարգի բնույթի և բովանդակության մասին ընդհանուր պատկերացման բացակայությունը հանգեցնում է զանազան կատեգորիաների, տերմինների և հասկացությունների միախառնման և կամայական մեկնաբանությունների: Որպես օրինակ կարելի է բերել “սոցիալական ապահովություն” տերմինը, որը հայերենում օգտագործվում է շատ երկրներում լայն տարածում գտած “social security” տերմինը թարգմանելու համար: Վերոնշյալ տերմինը հայերեն կարող է թարգմանվել որպես սոցիալական անվտանգություն, սոցիալական պաշտպանվածություն, սոցիալական երաշխիքներ, սոցիալական պաշտպանությունը: Բացի այդ, “սոցիալական ապահովություն” հասկացությունը համարժեք չէ “social security” հասկացությանը, քանի որ առաջինն արտացոլում է սոցիալական պաշտպանության խորհրդային պետական-պատերազմական համակարգի առանձնահատկությունները, որտեղ գերակշռում էին սոցիալական պաշտպանության պետական կազմակերպման սկզբունքները՝ սոցիալական ապահովագրության սկզբունքների խիստ սահմանափակ օգտագործմամբ և դրա կազմակերպման որևէ այլ ձևի իսպառ բացակայությամբ: Մինչդեռ “social security” հասկացությունը արտացոլում է սոցիալական ապահովության սկզբունքներով սոցիալական պաշտպանության կազմակերպումը: Շուկայական տնտեսության զարգացման ուղին բռնած երկրում “սոցիալական ապահովություն” հասկացությունը, որը հիմնականում արտացոլում է տնտեսվարման կենտրոնացված պլանային համակարգում սոցիալական պաշտպանության կազմակերպման առանձնահատկությունը, ներկայումս չի կարող լայնորեն օգտագործվել մեր երկրում: Այդ պատճառով “սոցիալական ապահովություն” հասկացությունը գործնական ոլորտից նշանակալի չափով դուրս մղվեց “սոցիալական պաշտպանություն” նոր հասկացության կողմից:

Անդրադառնալով հետխորհրդային Հայաստանում բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի ձևավորման գործընթացին՝ հարկ է նշել, որ այդ գործընթացը պայմանականորեն կարելի է բաժանել մի քանի փուլերի: Առաջին փուլը *շուկայական հարաբերությունների ձևավորման սկիզբն (1991-1995թթ.)* էր: Անկախության հռչակումից հետո Հայաստանի իշխանությունների առջև ծառայան բազմաթիվ խնդիրներ, որոնց թվում էին աղքատների ու գործազուկների սոցիալական պաշտպանությունը, ինչպես նաև հասարակության բոլոր խավերի շահերը հաշվի առնող ամբողջական սոցիալական քաղաքականության մշակումը: Դա նորանկախ Հայաստանի համար բավական բարդ խնդիր էր՝ սոցիալական պաշտպանության իրականացման մեխանիզմների և ավանդույթների բացակայության պատճառով: Անկախ պետականության բացակայության պայմաններում Հայաստանի սոցիալական քաղաքականությունը համապատասխանում էր այն երկրի (ԽՍՀՄ) սկզբունքներին, որի կազմի մեջ էր նա գտնվում: Միաժամանակ Հայաստանում գործում էին սոցիալական պաշտպանության սեփական մեխանիզմներ, որոնք հիմնված էին ազգային սովորույթների վրա:

Երկրորդ փուլը (1996-2000թթ.) *սոցիալական աջակցության և սոցիալական ապահովագրության համակարգերի տարանջատման սկիզբն էր*: Անկախության տասը տարիների ընթացքում ՀՀ-ում սոցիալական քաղաքականության ցուցանիշների դինամիկայի

վերլուծությունը¹² ցույց է տալիս, որ սոցիալական ոլորտի բարեփոխումները չեն բխել հստակ մշակված սոցիալական քաղաքականությունից և ունեցել են ավելի շատ մարտավարական, քան ռազմավարական բնույթ: Սակայն սոցիալական պաշտպանության ոլորտում որպես դրական տեղաշարժ կարելի է առանձնացնել բնակչության սոցիալական պաշտպանության նոր կառուցակարգերի ստեղծումը, ոլորտը կանոնակարգող մի շարք իրավական ակտերի առկայությունը, սոցիալական աշխատողների պատրաստման և վերապատրաստման ծրագրերը, կայուն համագործակցությունը միջազգային կառույցների հետ, սոցիալական ոլորտի կառավարման համակարգի տեխնիկական զինումը, և, իհարկե, ոլորտի բարեփոխումներին ուղղված բազմաթիվ ծրագրերի առկայությունը:

Երրորդ փուլը/2001թ.-ից առ այսօր/ սոցիալական բարեփոխումների իրականացման փուլն է՝ պայմանավորված, նախ և առաջ, Եվրախորհրդին Հայաստանի անդամակցությամբ: ՀՀ-ը, դառնալով Եվրախորհրդի անդամ/2001թ./, պարտավորություն ստանձնեց երկու տարում ստորագրելու և վավերացնելու Վերանայված եվրոպական սոցիալական խարտիան: Դրա վավերացումը ՀՀ-ի կողմից/2004թ./, նոր սկզբունքների և արդիական գաղափարների հիման վրա ամրագրված սոցիալական իրավունքների և նպատակների իրագործման ստանձնումը նոր իրավիճակ ստեղծեցին ՀՀ-ում իրականացվող սոցիալական քաղաքականության մեջ: Կանխորոշվեցին նաև սոցիալական բարեփոխումների ընթացքը և ուղղությունները: Առաջնահերթ խնդիր դարձավ սոցիալական օրենսդրության համապատասխանեցումը եվրոպական չափորոշիչներին:

ՀՀ-ի սոցիալական պաշտպանության համակարգը ներկայումս գտնվում է լայնածավալ բարեփոխումների փուլում: Այդ բարեփոխումներից կարելի է առանձնացնել կենսաթոշակային համակարգի բարեփոխումները: Այսօր համապատասխան ծրագրեր են իրականացվում սոցիալական ծառայությունների ինտեգրման և համալիր մատուցման ուղղությամբ, աշխատանքներ են տարվում հաստատությունների բեռնաթափման և խնամքի ապահինստիտուտականացման նպատակով: ՀՀ բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում տեղի ունեցող կարևոր բարեփոխումներից կարող ենք համարել նաև սոցիալական աշխատանքի ինստիտուտի ներդրումը համայնքներում և այլն:

Համաձայն “Սոցիալական պաշտպանությունը և սոցիալական ներառումը Հայաստանում” Եվրոպական հանձնաժողովի 2011թ. գեկույցի՝ սոցիալական պաշտպանության համակարգը Հայաստանում կարևոր դեր է կատարում բնակչությանը սոցիալական աջակցություն տրամադրելու և ծայրահեղ աղքատությունը մեղմելու հարցում: Ավելին, սոցիալական պաշտպանության քաղաքականության հիմնական նպատակը սահմանվում է որպես պետության կողմից սոցիալական ռիսկերի կառավարումը, նվազեցումը և կանխարգելումը: Պետության կողմից սահմանված են սոցիալական պաշտպանության համակարգի գործառույթները, որոնց հիման վրա բնակչության խոցելի խմբերին առաջարկվում են համապատասխան ծրագրեր, ներառյալ՝

- պետական սոցիալական աջակցության ծրագրերը,
- սոցիալական ապահովության ծրագրերը,
- սոցիալական պաշտպանության ծրագրերը,
- պետական սոցիալական ապահովագրության ծրագրերը

¹² Տե՛ս Մարդկային զարգացման գեկույց, Հայաստան 2001, Երևան 2001թ., էջ 93:

- գրադվածության ծրագրերը¹³:

Ընդհանուր առմամբ, կարելի է առանձնացնել հետխորհրդային Հայաստանում ձևավորված սոցիալական պաշտպանության համակարգի երկու կարևոր բաղադրիչ՝ սոցիալական ապահովագրություն և սոցիալական օգնություն:

Ըստ ՀՀ 2012-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի վերջնական նախագծի՝ սոցիալական պաշտպանությունը ՀՀ պետական քաղաքականության գերակա ուղղություններից մեկն է, ինչպես նաև այդ նույն փաստաթղթում առանձնացված են նաև սոցիալական պաշտպանության պետական քաղաքականության հետևյալ նպատակադրումները՝ աղքատության կրճատում, անհավասարության մեղմում, արժանավայել ծերության ապահովում, բնակչության խոցելի խավերի հնարավորությունների ընդլայնում և նրանց որոշակի սոցիալական երաշխիքների ապահովում, ժողովրդագրական իրավիճակի բարելավում¹⁴: Այս նպատակների իրականացման համար սոցիալական պաշտպանությանն ուղղված պետական ծախսերը 2008-2012թթ. անվանական արտահայտությամբ անընդհատ ավելացել են: Մասնավորապես ըստ ՀՀ վարչապետի 2012թ.-ի ՀՀ պետական բյուջեի կատարման արդյունքների վերաբերյալ ելույթի՝ 2012թ. սոցիալական պաշտպանության համակարգի ֆինանսավորումն արձանագրել է զգալի աճ՝ 13,9% կամ 35 մլրդ դրամ¹⁵, որը հիմնականում պայմանավորված է պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողներին սոցիալական փաթեթի հատկացմամբ, կենսաթոշակների, նպաստների, միանվագ դրամական օգնությունների ծավալների աճով, ինչպես նաև ՌԴ-ի կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրված վարկային միջոցների հաշվին, երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային ապահովման նպատակով միջոցների հատկացմամբ:

Խոսելով սոցիալական պաշտպանության համակարգի մասին՝ շատ կարևոր է անդրադառնալ նաև սոցիալական պաշտպանության մոդելներին, որոնց ներքո ի նկատի ունեն սոցիալական պաշտպանության համակարգի կազմակերպման և գործառնական սկզբունքները: Մասնագիտական գրականության շրջանակներում առանձնացվում են սոցիալական պաշտպանության տարբեր մոդելներ՝ ելնելով տարբեր չափանիշներից: Սովորաբար, թե սոցիալական պաշտպանության ինչ մոդել է նախընտրում այս կամ այն երկիրը, նշվում է տվյալ երկրի սոցիալական պաշտպանության հայեցակարգում, որը շատ կարևոր փաստաթուղթ է համարվում:

Այժմ անդրադառնանք սոցիալական պաշտպանության մոդելներին: Ըստ Անդրե Մապիրի՝ Եվրոպական Միությունում կարելի է առանձնացնել սոցիալական պաշտպանության 4 հիմնական մոդելներ՝ մայրցամաքային/կոնտինենտալ/, անգլոսաքսոնական, սկանդինավյան և միջերկրական¹⁶: Սկանդինավյան մոդելի մեջ ներառված են հետևյալ երկրները՝ Դանիան,

¹³ Տե՛ս “Սոցիալական պաշտպանությունը և սոցիալական ներառումը Հայաստանում” զեկույց, Եվրոպական հանձնաժողով, 2011թ., էջ 8:

¹⁴ Տե՛ս ՀՀ 2012-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր, վերջնական նախագիծ, Երևան, 2012թ., էջ 89:

¹⁵ Տե՛ս ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի ելույթը ՀՀ Ազգային ժողովում 2012թվականի ՀՀ պետական բյուջեի կատարման արդյունքների վերաբերյալ, <http://www.aravot.am/2013/05/29/248611/>, (24.11.2013թ. ժամը 17:46):

¹⁶ Տե՛ս ANDRÉ SAPIR, *Globalization and the Reform of European Social Models*, 2005, էջ 5:

Ֆինլանդիան, Շվեդիան, Նիդերլանդները: Այս երկրներին բնորոշ է սոցիալական պաշտպանության ամենաբարձր մակարդակն, ինչպես նաև համընդհանուր սոցիալական բարեկեցությունը:

Կոնտինենտալ կամ մայրցամաքային մոդելի մեջ են ներառված Ավստրիան, Բելգիան, Ֆրանսիան, Գերմանիան և Լյուքսեմբուրգը: Հատկապես հարկ է առանձնացնել Գերմանիայի օրինակը, որտեղ տվյալ մոդելը փոխակերպվել է սոցիալական շուկայական տնտեսության: “Սոցիալական շուկայական տնտեսություն” հասկացությունը շրջանառության մեջ է դրվել 1946թ. Ալֆրեդ Մյուլլեր Արմակի կողմից՝ սահմանելու համար այն տնտեսական քաղաքականությունը, որը համադրում է “շուկայական ազատության” և “սոցիալական համահարթեցման” սկզբունքները: Այսպիսի սոցիալական քաղաքականության նպատակն է տնտեսական ոլորտում հասարակության յուրաքանչյուր անդամի ակտիվ ինքնադրսևորման պայմանների ստեղծումը, մասնավորապես առաջին հերթին կարևորվում է աշխատունակ բնակչության համար բարենպաստ տնտեսական պայմանների ստեղծումն, որին էլ ուղղված են սոցիալական պաշտպանության հիմնական միջոցները¹⁷:

Անգլոսաքսոնական մոդելում ներառված են Իռլանդիան և Մեծ Բրիտանիան: Այս մոդելին բնորոշ է համեմատաբար լայն սոցիալական աջակցության ցանցը: Սակայն պետք է նշել, որ այս մոդելի շրջանակներում սոցիալական ապահովության ծրագրերը խիստ անհատականացված են, և դրանց մեծամասնությունը մասնավորեցված է: Կարիքավոր բոլոր խմբերի հավասարության փոխարեն ներդրված է բնակչության առանձին կատեգորիաներին ընտրական օգնության ցուցաբերման սկզբունքը: Դրանց շարքերին են դասվում կենսաթոշակառուները, հաշմանդամները, հիվանդ և անգործունակ անձինք, քիչ վարձատրվող ընտանիքները, ոչ լրիվ ընտանիքները և այլն:

Միջերկրական մոդելում ներառված երկրներն են՝ Հունաստանը, Իսպանիան, Պորտուգալիան, Իտալիան: Այս երկրների սոցիալական ծախսերի հիմնական մասը կազմում են կենսաթոշակների վճարումները: Վերոհիշյալ երկրների սոցիալական բարեկեցության համակարգերը հիմնվում են աշխատանքային պաշտպանության և վաղ տարիքում կենսաթոշակային ապահովման վրա՝ դրանով իսկ ազատելով աշխատանքային տարիքի բնակչությանն աշխատաշուկայում մասնակցություն ունենալուց: Աշխատավարձերի կառուցվածքը գոնե ձևական հատվածում ձևավորվում է կոլեկտիվ բանակացությունների արդյունքում:

Հիմք ընդունելով բնակչության սոցիալական պաշտպանությանն ուղղված պետական ծախսերի մակարդակը՝ Ռոբերտ Պինկերն առանձնացնում է սոցիալական պաշտպանության երկու մոդելներ՝ մնացորդային և ինստիտուցիոնալ¹⁸: Մնացորդային մոդելն ենթադրում է, որ սոցիալական օգնությունը պետք է տրամադրվի միայն բնակչության կարիքավոր շերտերին, ընդ որում պետական բյուջեից միջոցները հատկացվում են պետության սոցիալական գործառույթների իրականացման համար մնացորդային սկզբունքի համաձայն: Այդ իսկ պատճառով սոցիալական օգնությունը տրամադրվում է միայն առավել կարիքավոր/“մնացած”/ բնակչությանը, որը փոքրամասնություն է կազմում: Ինստիտուցիոնալ մոդելի շրջանակներում ենթադրվում է, որ պետությունը ձգտում է վերաբաշխել առկա ռեսուրսները՝ հասարակության բոլոր շերտերի պահանջունքները բավարարելու համար: Սակայն հաշվի առնելով այն հանգամանքն, որ անհնար

¹⁷ St'u Мюллер-Армач А. Принципы социального рыночного хозяйства / А. Мюллер-Армач. // В кн.: Социальное рыночное хозяйство. – СПб., 1999, էջ 264:

¹⁸ St'u Leonard, P. (1972), “Review, Robert Pinker, Social Theory and Social Policy”, Journal of Social Policy:

է իրականացնել ռեսուրսների առավելագույն արդյունավետ վերաբաշխում, այն երկրներում, որտեղ գործում է սոցիալական պաշտպանության այս մոդելը, միշտ էլ կլինեն բնակչության որոշակի շերտեր, որոնք լրացուցիչ սոցիալական ծառայությունների կարիք կունենան:

Բավականին հետաքրքիր դասակարգում է առաջարկել բրիտանացի սոցիոլոգ Ռիչարդ Թիթմուսը, որը ինձ-որ տեղ նման է Պինկերի դասակարգմանը: Թիթմուսի կարծիքով սոցիալական պաշտպանությունը սերտորեն կապված է բնակչությանը տրվող երաշխիքների մակարդակի հետ: Դրանից ելնելով՝ վերջինս առանձնացնում է բնակչության սոցիալական պաշտպանության հետևյալ մոդելները՝ մնացորդային, ինստիտուցիոնալ և արտադրական ձեռքբերումների¹⁹: Սոցիալական պաշտպանության արտադրական ձեռքբերումների մոդելի շրջանակներում, որը մշակվել է վերոհիշյալ երկու մոդելներից ավելի ուշ, շեշտադրվում է մարդու տնտեսական ակտիվությունը, այսինքն՝ օգնությունը տրամադրվում է բնակչության այն կատեգորիաներին, ովքեր չեն ցուցաբերել տնտեսական ակտիվություն և հետևաբար չունեն համապատասխան ապահովագրական ստաժ:

Բնակչության սոցիալական պաշտպանության մոդելների մեկ այլ դասակարգում է առաջարկել դանիացի գիտնական Գոստա Էսպինգ Անդերսոնը: Ելնելով նրանից, թե ինչ տեղ է զբաղեցնում սոցիալական պաշտպանությանն ուղղված քաղաքականությունը պետական քաղաքականության գերակայությունների շարքում, ինչպիսին է պետության մասնակցության աստիճանը վերաբաշխողական գործընթացներում՝ Անդերսոնն առանձնացնում է սոցիալական պաշտպանության հետևյալ մոդելները՝ ազատական կամ լիբերալ մոդել, պահպանողական կամ կոնսերվատիվ մոդել և սոցիալ-դեմոկրատական մոդել²⁰:

Ազատական մոդելի համար բնութագրական է սոցիալական ապահովագրության, համընդհանուր պետական տրանսֆերտների, ինչպես նաև կարիքավորության գնահատման ընթացակարգի վրա հիմնված կենսաթոշակների ցածր մակարդակը: Եկամտի պահպանման սոցիալական ծրագրերը մեծ մասամբ կողմնորոշված են դեպի ամենաաղքատները: Սոցիալական ծառայությունների մուտքը խճճված է մի շարք ընթացակարգային կանոններով, իսկ բուն օգնության ստացումը հաճախ պիտակավորվում է:

Պահպանողական մոդելի դեպքում պետությունը իր հիմնական քաղաքական խնդիրն է համարում եկամուտների պաշտպանությունը: Ընդ որում, վերջինս աննշան ազդեցություն ունի հասարակության մեջ եկամտի վերաբաշխման վրա և խառնվում է միայն այն դեպքում, երբ մարդու՝ ինքն իրեն ապահովելու հնարավորությունները սահմանափակ են:

Սոցիալ-դեմոկրատական մոդելը, որի ցայտուն օրինակ է հանդիսանում Շվեդիան, ենթադրում է լրիվ զբաղվածություն և եկամուտների համահարթեցում:

Բնակչության սոցիալական պաշտպանության վերոհիշյալ մոդելների դասակարգման վրա հիմնվելով՝ փորձենք հասկանալ, թե սոցիալական պաշտպանության ինչ մոդել է ձևավորվել հետխորհրդային Հայաստանում: Իրականում այս հարցին շատ դժվար է պատասխանել՝ մի քանի պատճառներից ելնելով՝

¹⁹ St'u P. Титмус. Социальное распределение социальной защиты, 1955:

²⁰ St'u G. Esping-Andersen. The Three Worlds of Welfare Capitalism. Cambridge: Polity Press & Princeton: Princeton University Press, 1990:

- ՀՀ-ում մինչև հիմա չկա մշակված սոցիալական պաշտպանության ապահովմանն ուղղված քաղաքականության միասնական հայեցակարգ՝ թեպետ առկա են սոցիալական պաշտպանության ոլորտը կանոնակարգող բազմաթիվ իրավական ակտեր, մշակվել են բնակչության առանձին խմբերի(ինչպես օրինակ, երեխաներ, հաշմանդամներ և այլն) սոցիալական պաշտպանության ռազմավարական ծրագրեր: Մինչդեռ սոցիալական պաշտպանության հայեցակարգի առկայության դեպքում կլուծվեր նաև սոցիալական պաշտպանության մոդելի խնդիրը:
- Վերլուծելով ներկայումս ՀՀ-ում գործող սոցիալական պաշտպանության համակարգը՝ կարելի է առանձնացնել մի շարք տարրեր, որոնք բնորոշ են վերագրյալում նկարագրված սոցիալական պաշտպանության որոշ մոդելների: Այսպես, օրինակ, ՀՀ-ում իրականացվող սոցիալական պաշտպանության պետական քաղաքականության մեջ ներառված են որոշակի տարրեր պահպանողական մոդելից, ինչպես օրինակ, սոցիալական ապահովագրության իրականացումը կենսաթոշակային ոլորտում, պետական միջոցների ներառումը սոցիալական ապահովության համակարգում, օրինակ, երեխայի ծննդյան կապակցությամբ տրամադրվող միանվագ նպաստը, միջնակարգ կրթության անվճար լինելու հանգամանքը և այլն:

Այսօր, դեռևս Հայաստանի համար բաց է մնում այն հարցը, թե սոցիալական պաշտպանության որ մոդելն առավել համապատասխան կլինի երկրի սոցիալական զարգացման համար: Այսօրվա բոլոր իրողություններին համապատասխան և միևնույն ժամանակ պետական ավանդույթների, սեփական պատմական փորձի և արտասահմանյան երկրների փորձի վրա հիմնված սոցիալական պաշտպանության մոդելի նպատակային, գիտակցված ընտրությունը հանդիսանում է այն կարևորագույն խնդիրներից մեկը, որը պետք է լուծվի սոցիալապես կողմնորոշված շուկայական տնտեսության կառուցման ճանապարհին: Այդ ընտրությունից է մեծապես կախված երկրի սոցիալական բարեկեցությունը:

Այսպիսով, ՀՀ սոցիալական պաշտպանության համակարգը դեռևս կայացման փուլում է, իսկ առկա բացթողումները, առաջին հերթին, պայմանավորված են ՀՀ-ում տնտեսական իրական հնարավորությունների վրա հիմնված սոցիալական պաշտպանության ապահովմանն ուղղված քաղաքականության միասնական հայեցակարգի բացակայությամբ: Սոցիալական պաշտպանության համակարգի հետագա զարգացումը հիմնախանում կախված է սոցիալական պաշտպանության ապահովմանն ուղղված քաղաքականության միասնական հայեցակարգի մշակման, սոցիալական պաշտպանության մոդելի ընտրության, սոցիալական պաշտպանության ոլորտի բարեփոխումներին ուղղված մի շարք ծրագրերի, սոցիալական պաշտպանության պետական քաղաքականության նպատակադրումների հետևողական իրագործումից:

Abstract

The Social Protection System of Population in Post-Soviet Armenia. Formation Process and Development Perspectives

The article is devoted to study of formation process and development perspectives of social protection system in Post-Soviet Armenia. Taking into consideration that fact that according to the Constitution of RA the Republic of Armenia is a social state, it is very important to explore and understand what kind of system

and model of social protection were formed in Post-Soviet Armenia. Besides, it is very important to describe the formation process of social protection system, its main components, analyze the effectiveness and development perspectives of the system. All these important questions have been discussed in the frames of the article.

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ Սահմանադրություն, գլուխ 1, հոդված 1: <http://www.president.am/hy/chapter1/>, (21.11.2013թ., ժամը 22:40):
2. Կայուն զարգացման ծրագիր, Երևան, 2008թ.: ՀՀ կառավարության 2008թ. հոկտեմբերի 30-ի N 1203-Ն որոշում:
3. Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան 2001, Երևան 2001թ.:
4. “Սոցիալական պաշտպանությունը և սոցիալական ներառումը Հայաստանում” զեկույց, Եվրոպական հանձնաժողով, 2011թ.:
5. ՀՀ 2012-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր, վերջնական նախագիծ, Երևան, 2012թ.:
6. ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի ելույթը ՀՀ Ազգային ժողովում 2012 թվականի ՀՀ պետական բյուջեի կատարման արդյունքների վերաբերյալ, <http://www.aravot.am/2013/05/29/248611/>, (24.11.2013թ. ժամը 17:46):
7. Смит А. Исследование о природе и причинах богатства народов. / А. Смит. – М.: Соц-Экгиз, 1962.
8. Жид Ш. История экономических учений. / Ш. Жид, Ш. Рист. – М.: Экономика, 1995:
9. Маршал А. Принципы экономической науки / А. Маршал. – в 3-х Т. – М., 1993, Т.3.
10. Пигу А. Экономическая теория благосостояния / А. Пигу. – М.: Прогресс, 1985.
11. Нецшеретний П.И. Исторические корни и традиции развития благотворительности в России. – М.: Наука, 1993.
12. Мамедов О.Ю. Современная экономика. Лекционный курс. Ростов-на-Дону: Издательство «Феникс», 2001.
13. Юдин В.П. Социальная защита: понятие, сущность, границы. Учеб.-метод. Пособие. – Казань: Казан.гос. технол. ун-т, 1995.
14. Аверин А.Н. Государственная система социальной защиты населения: Учебное пособие. – М.: Изд-во РАГС, 2007.
15. Мюллер-Армак А. Принципы социального рыночного хозяйства / А. Мюллер-Армак. // В кн.: Социальное рыночное хозяйство. – СПб., 1999.
16. Р. Титмус. Социальное распределение социальной защиты, 1955.
17. ANDRÉ SAPIR, Globalization and the Reform of European Social Models, 2005.
18. G. Esping-Andersen. The Three Worlds of Welfare Capitalism. Cambridge: Polity Press & Princeton: Princeton University Press, 1990.
19. Leonard, P., “Review, Robert Pinker, Social Theory and Social Policy”, Journal of Social Policy, 1972.